



California's Protection & Advocacy System
Toll-Free (800) 776-5746

Ինքնապաշտպանություն Դատարանում ներկայանալու անկարողության ընթացքում կալանավորվելու համար

Մեպտեմբեր 2012թ., Հրատ. # 5513.10 - Armenian

Բովանդակություն

Ո՞ր հանգամանքներում ես կարող եմ ճանաչվել Անկարող դատարանում ներկայանալու համար (անգլ. Incompetent to Stand Trial, IST):..... 2

Որքա՞ն ժամանակ ինձ կարող են պահել հիվանդանոցում ներկայանալու անկարողության ընթացքում կալանքի տակ լինելու դեպքում: 2

Արդյո՞ք դատարանում ներկայանալու անկարողության ընթացքում կալանքի համար ծախսված ժամանակը հաշվվում է բանտարկության դիմաց, եթե ես մեղավոր եմ ճանաչվել: 3

Ինձ կարո՞ղ են պահել հիվանդանոցում կալանքի համար նաախտեսված 3 տարվա առավելագույն ժամկետը լրանալուց հետո:..... 4

Կարո՞ղ են ինձ տեղավորել համայնքում, անգամ եթե ես ճանաչվել եմ մեղավոր որևէ հանցանքի մեջ: 5

Արդյո՞ք ես ունեմ բուժման իրավունք:..... 5

Արդյո՞ք իմ դատարանում ներկայանալու անկարողության ընթացքում կալանքի որոշումը վերանայվում է: 5

Ի՞նչպես է դատարանը որոշում, թե արդյոք ես դարձել եմ կարողունակ դատական վարույթին ներկա գտնվելու համար: 7

Երբ դատարանը որոշի, որ ես կարողունակ եմ դատարանի առջև պատասխանելու համար, ո՞րն է հաջորդ քայլը: 8

Կարո՞ղ եմ ես վիճարկել դատարանի առջև կանգնելու համար իմ անկարող ճանաչվելու որոշումը՝ ներկայացնելով դիմում դատարան ներկայանալու համար:..... 8

Ո՞ր հանգամանքներում ես կարող եմ ճանաչվել Անկարող դատարանում ներկայանալու համար (անգլ.՝ Incompetent to Stand Trial, IST):

Կալիֆորնիայի օրենսդրության համաձայն դուք կարող եք ճանաչվել Անկարող դատարանում ներկայանալու համար այն դեպքերում, երբ հոգեկան կամ զարգացման խանգարումներով հաշմանդամության պատճառով դուք չեք կարող.

- 1) Հասկանալ Ձեր դեմ հարուցված քրեական վարույթը
ԿԱՍ
- 2) Օգնել Ձեր փաստաբանին իրականացնել ձեր պաշտպանությունը ռացիոնալ կերպով

Դատարանում ներկայանալու համար անկարող ճանաչվելը կապ չունի այն բանի հետ, թե արդյոք դուք մեղավոր եք կամ մեղավոր չեք այն հանցանք(ներ)ի համար, որում ձեզ մեղադրում են:

Որքա՞ն ժամանակ ինձ կարող են պահել հիվանդանոցում ներկայանալու անկարողության ընթացքում կալանքի տակ լինելու դեպքում:

Դատարանում ներկայանալու անկարողության կալանքն ավարտվում է այն ժամանակ, երբ.

- 1) Կալանքի համար սահմանված առավելագույն ժամկետը լրանում է
ԿԱՍ
- 2) Դատարանը ձեզ հավաստագրում է որպես կարողունակ

Կալիֆորնիայի օրենսդրությունը սահմանափակում է Դատարանում ներկայանալու անկարողության ընթացքում կալանքների ժամկետները այն անձի համար, ով որևէ հանցանքի համար դատապարտվել է

ազատագրկման առավելագույնը 3 տարով կամ բանտարկության առավելագույն ժամկետով, որը որ ավելի կարճ լինի:

Օրինակ՝ ենթադրենք Ջոն Դոուլին մի դատարանը դատապարտել է թալանի, մյուս դատարանը՝ բռնություն գործադրելու, իսկ մեկ այլ դատարան՝ ավտոմեքենայի գողության համար: Նախքան նրա դատավարության սկսվելը նա ճանաչվել է անկարող դատարանում ներկայանալու համար և ուղարկվել է նահանգային հիվանդանոց՝ կարողությունը վերականգնելու համար: Տեսականորեն նրա՝ դատարանում ներկայանալու համար անկարող ճանաչվելու ընթացքում կալանքի առավելագույն ժամկետը կլինի ընդհանուր 3 տարի, այլ ոչ 3 տարի յուրաքանչյուր դեպքի համար:

Եթե ձեզ դատապարտել են թեթև աստիճանի հանցանքի համար, դատարանում ներկայանալու համար անկարող ճանաչվելու ընթացքում կալանքի առավելագույն ժամկետը կլինի 1 տարի կամ տվյալ հանցանքի համար բանտարկության ամենաերկար ժամկետը, որը որ ավելի կարճատև լինի:

Կարևոր է իմանալ, որ անգամ եթե ձեր բանտարկության առավելագույն ժամանակը լրանա, ձեզ կարող են կալանքի տակ պահել հոգեբուժական հաստատությունում, ինչը կերկարաձգի ձեր ժամանակը հիվանդանոցում, օրինակ՝ Մերֆիի խնամակալությունը կամ LPS խնամակալությունը:

Արդյո՞ք դատարանում ներկայանալու անկարողության ընթացքում կալանքի համար ծախսված ժամանակը հաշվվում է բանտարկության դիմաց, եթե ես մեղավոր եմ ճանաչվել:

Այո: Հիվանդանոցում անցկացրած ժամանակը հաշվվում է ձեր ստացած ցանկացած ազատագրկման դիմաց: Ձեր ազատագրկման համար կհաշվվի նաև որևէ ամբուլատոր բուժման ծրագրում ծախսած ժամանակը, եթե ընդգրկվեք նմանատիպ ծրագրում: Ազատագրկումից առաջ որևէ հիվանդանոցում, բուժհաստատությունում կամ ամբուլատոր

բուժման ծրագրում անցկացրած կալանքի դեպքում դուք չեք ստանա կրեդիտներ լավ վարքագծի կամ աշխատանքի համար:

Ինձ կարո՞ղ են պահել հիվանդանոցում կալանքի համար նաախտեաված 3 տարվա առավելագույն ժամկետը լրանալուց հետո:

Այո: Կալանքի ժամկետի երկարաձգման ձևերից մեկը Մերֆիի խնամակալությունն է: Մերֆիի խնամակալությունը երկարաձգում է այն ժամանակը, որը կարող է հատկացվել դատարանում ներկայանալու անկարողության ընթացքում կալանքի 3 տարվա առավելագույն ժամկետը լրանալուց հետո: Մերֆիի խնամակալությունը տևում է 1 տարի, սակայն կարող է երկարաձգվել յուրաքանչյուր տարի անորոշ ժամկետով:

Անձը կարող է ստանալ Մերֆիի խնամակալություն, եթե դատարանը գտնի, որ.

- 1) Անձը դեռևս անկարող է դատարանում ներկայանալու համար,
- 2) Անձը ճանաչվել է մեղավոր ծանր հանցանքի համար, և
- 3) Անձը էական վտանգ է ներկայացնում և կարող է ուրիշներին մարմնական վնասվածքներ հասցնել

Եթե դուք չեք համապատասխանում Մերֆիի խնամակալության պայմաններին, ձեզ կարող է տրամադրվել LPS խնամակալություն: Անձը կարող է ստանալ LPS խնամակալություն, եթե ունի հոգեկան առողջության հետ կապված հաշմանդամություն կամ տառապում է քրոնիկ հարբեցողությամբ, և դատարանը նրան ճանաչել է «ծանր հաշմանդամություն ունեցող»: Ծանր հաշմանդամ ճանաչված նշանակում է, որ քրոնիկ հարբեցողության կամ հոգեկան խանգարման պատճառով դուք չեք կարող ապահովել ձեզ սննդով, հագուստով կամ կացարանով:

Կարո՞ղ են ինձ տեղավորել համայնքում, անգամ եթե ես ճանաչվել եմ մեղավոր որևէ հանցանքի մեջ:

Սովորաբար ձեր վիճակը գնահատում են, և դուք ստանում եք բուժում որևէ նահանգային հիվանդանոցում: Եթե ձեզ ճանաչել են մեղավոր որևէ ծանր հանցանքի համար, դատարանը պետք է տեղավորի ձեզ նահանգային հիվանդանոցում կամ բուժհաստատությունում առնվազն 180 օր ժամկետով: 180 օրը լրանալուց հետո դուք **հնարավոր է** ընդգրկվեք պայմանական ազատման ծրագրում (CONREP), եթե դատարանը որոշի, որ CONREP ծրագրում ձեր լինելը վտանգավոր չի լինի ուրիշների առողջության ու անվտանգության համար: CONREP ծրագիրը հոգեկան խնդիրներով անձանց ամբուլատոր բուժման նահանգային ծրագիր է:

Եթե դուք ճանաչվել եք մեղավոր սեռական բնույթի հանցանքի համար, և դատավճռով պահանջվի, որ ձեզ գրանցեն որպես սեռական բնույթի հանցագործ, դուք իրավունակ չեք լինի CONREP ծրագրով բուժում ստանալու համար, մինչև դատարանը որոշի, որ դուք վտանգ չեք ներկայացնում ուրիշների համար, այդ ժամանակ դուք կստանաք ավելի համապատասխան բուժում որևէ այլընտրանքային բուժման ծրագրում:

Եթե դուք ճանաչվել եք մեղավոր ոչ ծանր հանցանքի համար, դուք **հնարավոր է** ընդգրկվեք անմիջապես CONREP ծրագրում:

Արդյո՞ք ես ունեմ բուժման իրավունք:

Այո: Դուք ունեք բուժում ստանալու իրավունք, որը կնպաստի մտավոր կարողունակության արագ վերականգնմանը:

Արդյո՞ք իմ դատարանում ներկայանալու անկարողության ընթացքում կալանքի որոշումը վերանայվում է:

Այո: Բուժման ծրագիրը, որում դուք ընդգրկվել եք, պետք է դատարանին ուղարկի հաշվետվություններ դատարանում ներկայանալու համար

կարողունակ դառնալու ձեր առաջընթացի վերաբերյալ: Առաջին վերանայումը կատարվում է ձեր կալանքից հետո 90 օրվա ընթացքում:

Եթե 90 օր հիվանդանոցում անցկացնելուց հետո դուք դեռևս ունակ չեք դատարանի առջև կանգնել, և հիվանդանոցը հայտնում է, որ իր կարծիքով դուք կդառնաք կարողունակ կանխատեսելի ապագայում, դուք կշարունակեք բուժումը հիվանդանոցում կամ բուժման ամբուլատոր ծրագրում: 90-օրյա հաշվետվությունից հետո հիվանդանոցը դատարանին պետք է ուղարկի հաշվետվություններ ձեր առաջընթացի վերաբերյալ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ:

Դուք իրավունք ունեք վիճարկել հիվանդանոցների առաջարկությունները 90 օր կամ 18-ամիս հետո անցկացվող վերանայման լսումների ժամանակ:

Եթե առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունում նշվում է, որ դուք հավանաբար չեք դառնա կարողունակ կանխատեսելի ապագայում, դուք պետք է վերադարձվեք դատարանին՝ խնամակալության լսումներ անցկացնելու համար: Այս լսումների ժամանակ դուք հնարավոր է ընդգրկվեք LPS կամ Մերֆիի խնամակալության ծրագրերում: Եթե դուք չեք համապատասխանում խնամակալության որևէ ծրագրի պայմաններին և կրել եք կալանքի առավելագույն ժամկետը, դատարանը պետք է ազատի ձեզ:

Կալանքի առավելագույն ժամկետ նշանակում է, օրինակ եթե ձեզ ճանաչած լինեին մեղավոր ոչ ծանր հանցանքի համար և դատապարտած լինեին, բանտում կամ գաղութում ձեր ազատազրկումը չէր լինի 180 օրից ավելի: 180 օրվան հաջորդող վերանայման լսումների ժամանակ, եթե հիվանդանոցն ասել է, որ դուք կանխատեսելի ապագայում չեք դառնա կարողունակ, դատարանը կազատի ձեզ, քանի որ դուք արդեն անցկացրել եք 180 օր հիվանդանոցում: Կրկին, սա տեղի կունենա միայն այն դեպքում, եթե դուք չհամապատասխանեք LPS կամ Մերֆիի խնամակալության պայմաններին:

Անկախ այն բանից, թե ինչ տիպի հանցանքի համար էք դուք մեղավոր ճանաչվել՝ ծանր, թե ոչ ծանր, ըստ օրենքի 180 օր հետո ձեզ համար պետք է նշանակվի կարողունակության նոր վարույթ (տե՛ս Քրեակատարողական օրենսգրքի բաժին 1369-ը): Այդ ժամանակ դատարանը կարող է որոշել պահել ձեզ հիվանդանոցում կամ ընդգրկել LPS կամ Մերֆիի խնամակալության ծրագրերից որևէ մեկում:

Ի՞նչպես է դատարանը որոշում, թե արդյոք ես դարձել եմ կարողունակ դատական վարույթին ներկա գտնվելու համար:

Եթե հիվանդանոցը կարծում է, որ դուք դարձել էք կարողունակ դատական վարույթին ներկա գտնվելու համար, հիվանդանոցը դատարանին ուղարկում է Կարողունակության վերականգնման հավաստագիր: Հիվանդանոցն այս հավաստագիրն ուղարկում է դատարանին պատվիրված նամակով: Այնուհետև ձեզ պետք է հետ բերեն դատարան կարողունակության վերականգնման լսումների դիմումի ներկայացումից հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում:

Կարողունակության վերականգնման լսումների ժամանակ դատարանը որոշում է, թե արդյոք դուք այժմ կարողունակ էք դատարանի առջև պատասխանելու համար: Եթե դատարանը որոշում է, որ դուք կարողունակ էք, դատարանը կորոշի, թե արդյոք դուք կարող էք գրավ վճարել կամ ազատվել ձեր սեփական պատասխանատվությամբ (ազատում առանց գրավի):

Ձեր փաստաբանը կամ մեղադրող կողմը կարող են նաև դիմել դատարանին՝ անցկացնել կարողունակության վերականգնման լսումներ:

Կարողունակության վերականգնման լսումների ժամանակ դուք երդվյալ ատենակալներով վարույթի իրավունք չունեք:

Կարողունակության վերականգնման լսումների ժամանակ դուք ենթադրվում էք կամ համարվում էք կարողունակ: Եթե հիվանդանոցը

կամ մեղադրող կողմը համարում են, որ դուք կարողունակ չեն, նրանք դատարանին պետք է ապացուցեն դա «ծանրակշիռ ապացույցների» միջոցով: Դա ավելի քիչ է հիմնավորված, քան «ողջամիտ կասկածից վեր» դիտարկումը:

Երբ դատարանը որոշի, որ ես կարողունակ եմ դատարանի առջև պատասխանելու համար, ո՞րն է հաջորդ քայլը:

Երբ դուք ճանաչվում եք կարողունակ դատարանում պատասխանելու համար, քրեական վարույթը վերսկսվում է: Եթե մինչև ձեր անկարող ճանաչվելը դուք ունեցել եք նախնական լսումներ, դուք ամենայն հավանականությամբ չեք ունենա այլ նախնական լսումներ: Եթե դուք անկարող եք եղել դատարանում պատասխանելու համար կարճատև ժամանակով, ձեր վարույթը հավանաբար կշարունակվի: Եթե դուք անկարող եք եղել դատարանում պատասխանելու համար երկար ժամանակով, ձեր վարույթը հնարավոր է հայտարարվի սխալ, և պետք է սկսվի նոր վարույթ: Եթե ունեք հարցեր նոր վարույթ սկսելու վերաբերյալ, պետք է խոսեք ձեր փաստաբանի հետ:

Եթե ձեր կարողունակության վերականգնման լսումների ժամանակ դատավորը ճանաչում է ձեզ կարողունակ, հնարավոր է ձեզ հետ ուղարկեն հիվանդանոց, որպեսզի սպասեք մինչև ձեր վարույթի սկսվելը: Դատավորը կարող է հետ ուղարկել ձեզ հիվանդանոց, եթե կարծում է, որ գաղութում գտնվելը ձեզ համար կարող է ռիսկային լինել կրկին անկարող դառնալու համար, կամ եթե ձեր կարողունակությունը պահպանելու համար ձեզ անհրաժեշտ է շարունակել բուժումը:

Կարո՞ղ եմ ես վիճարկել դատարանի առջև կանգնելու համար իմ անկարող ճանաչվելու որոշումը՝ ներկայացնելով դիմում դատարան ներկայանալու համար:

Այո

Էջ 9` 9-ից

*Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության
կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից,
հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս՝*
[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).